ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

11 ապրիլի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

51
(2901)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼ ԵՆ ԾԵԾԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ապրիլի 9-ին Երեւան քաղաքի դատարանի Աջափնյակի նստավայրում արտասովոր խառնաշփոթ է եղել: Բանն այն է, որ դատարանը ծանուցում է ուղարկել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին, որ նա ներկայանա դատարան՝ իր ծեծի գործով հարցաքննության: Արդյունքում, դատարանում զգուշացրել են, որ Միրզոյանը ներկայանալու է, ու այնտեղ սկսվել է խառնաշփոթ, թե ովքեր կանգնեն մուտքի մոտ, ովքեր որտեղ լինեն, ինչպես դիմավորեն եւ այսպես շարունակ:

Եվ ահա, Միրզոյանը հարցաքննվել է ու պնդել, որ այդ օրը, ով որ եղել է վերոնշյալ հատվածում իրեն ծեծել է:

Հիշեցնենք՝ 2023 հունվարի 17-ին Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ Արա Բադոյանը, 2020 թվականի պատերազմի դադարեցման գործընթացով պայմանավորված, մի խումբ քաղաքացիների հետ եկել է մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի տարածք, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ մի խումբ քաղաքացիների հետ հրահրել է զանգվածային անկարգություններ: Նույն հաղորդագրության համաձայն՝ միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս՝ այդկերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ:

Արա Բադոյանի եւ զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների կողմից գործադրված բռնության հետեւանքով Արարատ Միրզոյանին պատճառվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ. վերջինս կորցրել էր գիտակցությունը, վնասվել էր նրա աչքը, եւ Միրզոյանին տեղափոխել էին «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Եվ ահա, Արա Բադոյանը կալանավորված է, եւ ուշագրավն այն է, որ նրան մեղադրում են ոչ թե Արարատ Միրզոյանին ծեծելու, այլ ծեծի փորձի մեջ. վերջինս չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը:

---

ՀՀ գրեթե բոլոր գերատեսչությունները հաճախ սնվում, որոշ գերատեսչությունների ղեկավարներ էլ նաեւ նվերներ են գնում, օրինակ, նախարարությունների բյուջեից: Նվերներին դեռ կանդրադառնանք. բայց այ ամենաուշագրավը պետական կառույցների կենցաղային գնումներն են ՀՀ պետական բյուջեի հաշվին: Օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովը 2024 թվականի հունվարի 1-ին էլեկտրոնային աճուրդով գնել է ըմպելու ջուր՝ 3 մլն 850 հազար դրամի: Պայմանագրով նախատեսված է 70 հազար շիշ խմելու ջուր առաքել ՀՀ ԱԺ 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կիսամյակներին, ամեն անգամ՝ 15 կամ 20 հազար հատ: ՀՀ քաղաքաշինության կոմիտեն մեկ անձից գնման եղանակով գնել է «Բյուրեղ» ջուր, որի մեկ հատի արժեքը կազմել է 160 դրամ եւ «Ջերմուկ», որի մեկ հատի արժեքը՝ 180 դրամ: Ջրերի գնման ընդհանուր արժեքը կազմել է 120 հազար ՀՀ դրամ: Ջրի հետ մեկտեղ կոմիտեի կարիքների համար գնվել է 30 հատ 100 գրամանոց աղացած սուրճ, որոնցից մեկ փաթեթի արժեքը կազմել է 600 դրամ: Կոմիտեն այս գնումների համար վճարել է 138 հազար դրամ: Սպասենք հետագա «կարեւոր» գնումներին:

---

2021թ.-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը ձեւավորել էր արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչների հետ քննարկումների նոր հարթակ: Փաշինյանն իր՝ ՔՊ-ին սատելիտ քաղաքական ուժերի ղեկավարների հետ հանդիպում, քննարկումներ էր ունենում, ու տպավորություն էր ստեղծվել, որ Հայաստանի ապագայի համար կարեւոր հարցերը Նիկոլ Փաշինյանը նրանց հետ է լուծում: ՔՊ-ամերձ այս ֆորմատում խորհրդարանական ընտրություններին մասնակցած, բայց անցողիկ շեմը չհաղթահարած մոտ 10 կուսակցությունների ներկայացուցիչներ էին՝ «Ազատական» կուսակցության առաջնորդ Սամվել Բաբայանը, «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության առաջնորդ Տիգրան Ուրիխանյանը, «Արդար Հայաստան» կուսակցության ղեկավար Նորայր Նորիկյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, «Հայաստանի դեմոկրատական կուսակցություն»-ից Տիգրան Արզաքանցյանը, «Հայաստանի Եվրոպական կուսակցության» ղեկավար Տիգրան Խզմալյանը, «Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության» նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Մհեր Տերտերյանը, «Պահպանողական» կուսակցության ղեկավար Միքայել Հայրապետյանը, «Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան» կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը: Հետզհետե այս ֆորմատը մաղվեց, ավելին՝ հարթակի անդամ քաղաքական ուժերի ներկայացուցիչներն այսօր արդեն որպես ընդդիմադիր են հանդես գալիս ու քննադատում են Փաշինյանին: Իսկ ո՞ւր է անհետացել հիմա այս հարթակը. արդյո՞ք այն լուծարվել է: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հայաստանի Եվրոպական կուսակցության» ղեկավար Տիգրան Խզմալյանն ասաց, որ վերջին անգամ արտախորհրդարանական ուժերի ֆորմատով հանդիպում եղել է նախորդ տարի՝ սեպտեմբերին:



***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

---

2024 թվականի հունվարի 19-ին ՀՀ արդարադատության նախարարությունը «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր է կնքել, որի արժեքը կազմել է 27 մլն 936 հազար դրամ: Պայմանագրի գնման առարկան իրական շահառուների հայտարարագրման եւ առցանց ծառայությունների մատուցման, էլեկտրոնային համակարգերի սպասարկման ծառայություններն են: Պայմանագրի մատուցման ժամկետը մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 25-ն է: «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի հետ նախարարությունը սկսել է պայմանագրեր կնքել սկսած 2018 թվականի ապրիլից. մինչեւ այսօր գերատեսչության հետ կնքվել է 21 պայմանագիր, որից 16-ը՝ մեկ անձից գնման կասկածահարույց ընթացակարգով: 2013 թվականին ստեղծված «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի 80% բաժնեմասը, ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համակարգի, պատկանում է Ազնեսա Մանուկյանին, որը ընկերության հիմնադիր-տնօրեն Վահագն Մխիթարյանի կինն է: Այս ընկերությունը պայմանագրեր է կնքել նաեւ այլ գերատեսչությունների, նաեւ համայնքապետարանների հետ: 2018 թվականի տարեվերջից ընկերությունը միլիոնավոր դրամների շուրջ 315 պայմանագիր է կնքել տարբեր գերատեսչությունների հետ, որից մոտավորապես 240-ը՝ մեկ անձից, ոչ մրցութային ընթացակարգերով: Մեկ անձից գնումների միջոցով չարաշահումները Հայաստանում կարծես արմատավորվում են: Հիշենք, թե ինչպես էկոնոմիկայի նախարարության գնումների գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի կասկածով ձերբակալվեցին փոխնախարար Անի Իսպիրյանը եւ ՀՀ ԱԺ նախագահի եղբոր կինը, հետագայում նաեւ նախկին նախարար Վահան Քերոբյանը. նրանք այժմ տնային կալանքի տակ են: Հարցական է մնում միայն, թե գնման ընթացակարգերի միջոցով հնարամիտ եղանակով գումարների հափշտակում իրականացնող ընկերությունների չարաշահումները բացահայտող գործընթացներ կա՞ն, թե՞ ոչ:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
RA MINISTRY OF JUSTICE

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳՐԵՐ՝ Ա. ԱՇՈՏՅԱՆԻ ՀԱՄԱՐ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՈՎ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ Է

**Հակակոռուպցիոն դատարանում երեկ ընթանում էր քաղբանտարկյալ Արմեն Աշոտյանի գործով դատական նիստը:**

Նշենք, որ ընդդիմադիր պատգամավորները երաշխավորագրեր են ներկայացրել դատարանին՝ Աշոտյանին ազատ արձակելու համար:

Դատարանի բակում էր նաեւ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը. ArmLur.am-ը մի քանի հարց ուղղեց նրան:

**-Տիկին Թովմասյան, գրեթե 10 ամիս է, ինչ Արմեն Աշոտյանը կալանքի տակ է գտնվում, այդ իսկ պատճառով էլ երաշխավորություն եք ներկայացրել դատարանին նրա ազատ արձակման համար: Ի՞նչ սպասելիքներ ունեք այդ երաշխավորությունից, արդյո՞ք դատարանը կբավարարի այն:**

-Երաշխավորի ինստիտուտը հենց նրա համար է, որ հանրության շրջանում որոշակի ճանաչվածություն, վստահելիություն, ունեցող անձը կարողանա երաշխավորություն տալ որեւէ կալանավորի համար, որպեսզի վերջինս ազատ արձակվի, եւ սրանից բխում է նաեւ, որ նա ազատության մեջ չի խախտի օրենքները, կենթարկվի նախաքննական մարմնի որոշումներին եւ այլն, բայց, ցավոք սրտի, ես խիստ կասկածում եմ, որ հայկական իրականության մեջ մենք դրական արդյունքի ականատես կլինենք, թեպետ պատգամավորն այն մարդն է, որն օժտված է առաջնային մանդատով, այսինքն՝ պատգամավորին ընտրել են քաղաքացիները, եւ նա ունի ամենահուսալի վստահությունը հանրության մեջ՝ որպես ինստիտուցիոնալ մարմնի ներկայացուցիչ, հետեւաբար, պատգամավորների ներկայացրած երաշխավորությունը պետք է որ հաստատվի եւ ընդունվի: Չեմ կարող ասել՝ այս դատավորի մտքով ինչ կանցնի, եւ նա ում հրահանգները իրականում կկատարի, որովհետեւ եթե նա առաջնորդվի օրենսդրությամբ, բնականաբար պիտի Արմեն Աշոտյանը հենց այս պահին ազատ արձակվի դատարանի դահլիճից՝հաշվի առնելով այն փաստը, որ 33 ընտրված մարդիկ երաշխավորում են, որ նա չի փախչելու քննությունից, երկիրը չի լքելու եւ շարունակելու է նախաքննական մարմնի բոլոր որոշումներին եւ գործողություններին ընդառաջ գնալ այնպես, ինչպես եղել է, եւ անհասկանալի էր ընդհանրապես Արմեն Աշոտյանին կալանքի տակ առնելու որոշումը: Հիմա ես մեծ հույս չունեմ, բայց նաեւ չեմ կարող քայլ չանել, որպեսզի Հայաստանում մեկ հոգով պակաս լինեն քաղբանտարկյալները:

**-Տիկին Թովմասյան, միշտ նշվում է, որ Հայաստանում կան քաղբանտարկյալներ՝ ի դեմս Արմեն Աշոտյանի, սակայն արդարադատության նախարարը նշում է, որ Հայաստանում ընդհանրապես քաղբանտարկյալներ չկան: Ի՞նչ եք կարծում, ի՞նչու է այստեսակ հայտարարություն անում:**

-Իշխանությունները միշտ այդպես են ասում. չեմ հիշում, որ մեկ այլ ձեւակերպմամբ պատասխանած լինեն, բայց Արմեն Աշոտյանը դասական քաղբանտարկյալ է: Մենք հիմա մի հետաքրքիր փաստաթղթի ուղղությամբ ենք աշխատում՝ հանել ենք բոլոր հնարավոր ձեւակերպումները, թե աշխարհում ինչպես է տրվում *քաղբանտարկյալի* բնորոշումը, եւ հավատացեք՝ բոլոր այդ պահանջների, ձեւակերպումների մեջ Արմեն Աշոտյանի՝ իբրեւ քաղբանտարկյալի դեպքը տեղավորվում է: Նա նաեւ միջազգային օրենսդրությամբ եւ միջազգային նորմերով քաղբանտարկյալ է, ու այդ մասին ես շուտով նաեւ հանրային կերպով կհայտնեմ:

**-Ի՞նչ եք կարծում, այս անգամ դատարանը ի՞նչ կորոշի:**

-Դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով, թե ով է Հայաստանում Բարձրագույն խորհրդի նախագահը, որը խնդիր է դրել իր առաջ ենթարկեցնելու դատավորներին: Ինչպես գիտեք, Բարձրագույն խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի աշխատասենյակում կախված է Նիկոլ Փաշինյանի լուսանկարը, նա ոգեշնչվում է այդ նկարով եւ արդարադատությունը պատկերացնում է վարչապետ Փաշինյանի դեմքով: Հաշվի առնելով, որ Արմեն Աշոտյանի կողմից հնչեցված քննադատական խոսքերը Նիկոլ Փաշինյանի հասցեին ավելի են զայրացրել Փաշինյանին, կարող եմ ասել, որ դժվար եմ պատկերացնում, թե դատավորը կարող է քաղաքական համարձակություն ցուցաբերել, թեեւ ֆորմալ առումով դատավորը պարտավոր է քաղաքական չեզոքություն ցուցաբերել եւ հետեւել փաստերին, ոչ թե հրահանգներին, քանզի Արմեն Աշոտյանի գործը եւ իրավաբանությունը չափազանց հեռու են իրարից: Միայն մի փաստ. խորհրդի նախագահը որեւէ հաստատության վարչարարություն չի իրականացնում, իսկ Արմեն Աշոտյանին դատապարտում են հենց վարչարարության համար, այսինքն՝ «ինչ-որ որոշում է կայացրել», «ինչ-որ թուղթ է ստորագրել», բայց նա կոլեգիալ մարմնի ղեկավար է եղել, եւ դրանով արդեն ամեն ինչ ասված է:

*Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ*

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՎՏՈՇԱՐԱՍՅՈՒՆԸ

# ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 197

**Նիկոլ Փաշինյանը 2019 թվականի մայիսի 5-ի մամուլի ասուլիսի ժամանակ հրապարակած «փաստ N93-ը՝ «Նոր Հայաստան»-ի մասին» զեկույցում հայտարարեց. «ՀՀ վարչապետի ավտոշարասյունը կանգ է առնում լուսացույցի արգելող նշանի տակ, բացառությամբ հատուկ դեպքերի, և քաղաքացիներին զիջում է ճանապարհը հեծիոտնային անցումների վրա»:**

Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթը հարկ է համարում հիշեցնելու, որ այս ելույթից երեք ամիս առաջ՝ 04.02.2019 թվականին, համացանցում տեսանյութ տարածվեց, թե ինչպես է Նիկոլ Փաշինյանի շարասյունը Երեւանի կենտրոնում՝ Ամիրյան փողոցում, կոպտորեն խախտում ճանապարհային երթեւեկության կանոնները, ստեղծում վթարային իրավիճակ:

2020 թվականից ի վեր Նիկոլ Փաշինյանին սպասարկող ավտոշարասյունը մեծացել է, եւ մինչ վարչապետի տեղաշարժի մեկնարկը, ոստիկանությունը կաթվածահար է անում երթեւեկությունը այն փողոցներում, որոնցով պետք է անցնի Նիկոլ Փաշինյանի շարասյունը:

2022 թվականի ապրիլի 26-ին՝ երեկոյան ժամը 18:05-ի սահմաններում, Երեւանի Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին ուղեկցող ավտոշարասյունը, մասնավորապես՝ ոստիկանության սպայական վաշտի հրամանատարն իր կողմից վարած «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել 28-ամյա քաղաքացի Սոնա Մնացականյանին, որը գտնվում էր հղիության 8-րդ ամսում:

Այդ ժամանակ շարասյունը Նիկոլ Փաշինյանին ուղեկցում էր Ազգային ժողով՝ ՔՊ խմբակցության հետ հանդիպման: Վրաերթի ենթարկելուց հետո ավտոմեքենան մի պահ կանգնում է, այնուհետ– շարունակում է ընթացքը: Վրաերթից որոշ ժամանակ անց շտապօգնության մեքենայով Սոնա Մնացականյանին տեղափոխում են «Նաիրի» բժշկական կենտրոն, սակայն, արդեն մահացած վիճակում:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց. ապրիլի 26-ին ձերբակալվեց վրաերթի ենթարկողը՝ ոստիկանության մայոր, ուղեկցող սպայական վաշտի 3-րդ դասակի հրամանատար 51-ամյա Արամ Նավասարդյանը: Ապրիլի 29-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նա ազատ արձակվեց:

Այդ դեպքից հետո Նիկոլ Փաշինյանի տեղաշարժի ժամանակ հետիոտնային անցումների երկու կողմերում մի շարք ոստիկաններ են կանգնում արգելելու համար քաղաքացիների տեղաշարժը:

Վարչապետի ավտոշարասյունը ոչ միայն կարմիր լույսի տակ չի կանգնում, այլեւ մարդ է սպանում:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՌԴ–Ի ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԽԶՈՒՄ

«Հայաստանը կարող է դիտարկել Ռուսաստանի հետ միջկառավարական համաձայնագիրը միակողմանի խզելու տարբերակը». - խորհրդարանում այս մասին հայտարարեց բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը:

«Հույս ունեմ, որ միջկառավարական համաձայնագրի խմբագրման վերաբերյալ մեր առաջարկները կընդունվեն: Եթե դրանք չընդունվեն, ապա ես իրականում չեմ բացառում հավանականությունը, որ Հայաստանը կարող է եւ դիտարկել այդ համաձայնագիրը միակողմանի խզելու տարբերակը»,- ասաց նա:

Նախարարը նշեց, որ 2 շաբաթ առաջ հայտարարվեց «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» եւ «Կիրակի երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» հաղորդումների հեռարձակումը Հայաստանում արգելափակելու մասին որոշումը, այն բանից հետո, երբ ամիսներ շարունակ Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ տեղի էին ունենում միջկառավարական համաձայնագրի վերաբերյալ շփումներ, կոնսուլտացիաներ:

Ըստ նրա՝ այդ կոնսուլտացիաների նպատակն էր արձանագրել, որ 5-րդ եւ 6-րդ հոդվածները խախտվել են, սակայն չի հաջողվել արձանագրել խախտումների փաստը, դրա վերաբերյալ չի եղել կոնսենսուս, ինչի հետեւանքով էլ այդ հաղորդումները եթերազրկվել են:

Միաժամանակ Հայրապետյանն ասաց՝ սա չի նշանակում, որ այդ բանակցությունները փակուղում են: Նա տեղեկացրեց, որ առաջիկայում նախատեսում են առաջարկների փաթեթ ուղարկել ռուս գործընկերներին, թե ինչպես են պատկերացնում միջկառավարական համաձայնագրի վերաբերյալ նոր խմբագրումները:

«Մեր նպատակը իրավիճակի սրումը չէ, այլ կառուցողական բանավեճի արդյունքում ստանալ այնպիսի փաստաթուղթ, որը կաշխատի, ստանալ այնպիսի փաստաթուղթ, որտեղ ամրագրված խախտումների դեպքում կհետեւեն պատժամիջոցներ: Մեր ցանկությունն է վերախմբագրել այդ համաձայնագիրը, որը հնարավորություն կտա նման խախտումների հայտնաբերման պարագայում կիրառել վարչական վարույթ՝ սանկցիաներ», - նշեց ԲՏԱ նախարարը:

Այս տարվա փետրվարին պաշտոնական Երեւանը բողոքի նոտա էր հղել Մոսկվային՝ երկու կառավարությունների միջեւ կնքված համաձայնագիրը խախտելու համար:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼ

Ռուսաստանի Դաշնությունն Ադրբեջանին եւ Հայաստանին կոչ է անում զերծ մնալ տարածաշրջանում լարվածություն հրահրելուց:

Այս մասին ապրիլի 10-ին կայացած ամենշաբաթյա մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ ընդգծելով, որ առկա են անհրաժեշտ բոլոր մեխանիզմները Հարավային Կովկասում խաղաղության ու կայուն զարգացման ապահովման համար:

«Առաջին հերթին խոսքը կողմերի եռակողմ պայմանավորվածությունների մասին է, որոնք ձեռք են բերվել 2020-2022 թվականների ընթացքում: Հետեւողականորեն կոչ ենք անում կողմերին վերադառնալ իրեն արդարացրած ձեւաչափին: Մեր կողմից միշտ պատրաստ ենք ցուցաբերելու անհրաժեշտ գործնական ազդեցություն՝ Բաքվի ու Երեւանի կողմից փոխընդունելի որոշումների կայացման համար, այդ թվում՝ հայ-ադրբեջանական սահմանի դելիմիտացիայի հարցում»,- ասել է Զախարովան՝ կրկին պնդելով, որ հավաքական Արեւմուտքի դերակատարությունը Հարավային Կովկասում, ինչպես ցույց է տվել այլ տարածաշրջանների փորձը, կհանգեցնի աղետալի հետեւանքների:

Ըստ Զախարովայի՝ ցանկացած վիճահարույց հարց պետք է լուծել կառուցողական մոտեցմամբ, փոխզիջմամբ, պատասխանատվության սկզբունքով, որոնք համաձայնեցվել են Թեհրանում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին՝ «3+3» ձեւաչափով կայացած հանդիպման ժամանակ:

## ԲԺԻՇԿՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

ԱԺ-ում քննարկվում է մի նոր օրենք՝ «Լիցենզավորման մասին օրենքում լրացում կատարելու մասին», ըստ որի, բժիշկների մոտ սկսվելու է լիցենզավորման գործընթաց:

ԱԺ պատգամավոր Նարեկ Զեյնալյանը առաջարկել է վերանայել նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 5.1 գլխի եւ այդ գլխում շարադրվող հոդվածների համարակալումները՝ հաշվի առնելով 2-րդ ընթերցմամբ ընդունված Պ-609 նախագծի համարակալումը:

ArmLur.am-ի հետ զրույցում «Առողջության իրավունք» ՀԿ-ի տնօրեն Անուշ Պողոսյանը, անդրադառնալով այս որոշմանը, ասաց. «Այստեղ խնդիրն այն է, որ բժիշկները կրեդիտավորվեցին, եւ բավականին խնդրահարույց անցավ այդ ճանապարհը, եւ հիմա գնում են անհատական լիցենզիային: Այս պահին բժիշկները, որոնք աշխատանքային փորձ չունեն, գնում են քննության հանձնելու, տեսնում են անհասկանալի թեստեր. բոլորը հանձնում են նույն թերապեւտիկ պրոֆիլի տեքստը, այսինքն՝ մասնագիտական առումով այդքան էլ կազմակերպված չէ, եւ ավելի շատ ձեւական բնույթ է կրում»:

Նրա խոսքով՝ այս փուլում ամբողջ հանրապետության բժիշկների համար չեն կարողացել հավաստագրման քննությունը կազմակերպել ըստ պատշաճի, եւ հիմա ասում են, որ սկսելու են բժիշկների լիցենզավորումը:

Հիշեցնենք, որ սույն որոշումը ուժի մեջ կմտնի 2025 թվականի հունվարի 1-ից:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

### ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՍԱՀՄԱՆ

# ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ

**Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա հարձակումից հետո հասկացել է, որ Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանի արձանագրումն է, որ կարող է լրացուցիչ եւ որոշիչ գործոն դառնալ մեր երկրի կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ անվտանգությունն ապահովելու հարցում:**

Փաշինյանն այս մասին երեկ հայտարարեց ԱԺ-ում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի քննարկման ժամանակ ունեցած ելույթում:

«Կառավարությունը եւ անձամբ ես հանգել ենք այն համոզման, որ պատմական Հայաստանը եւ իրական Հայաստանը ոչ միայն համատեղելի չեն, այլ նաեւ հաճախ հակոտնյա են միմյանց, նույնիսկ լրջագույն սպառնալիքներ են ստեղծում մեկը մյուսի համար: Ես եւ կառավարությունը, երկար ժամանակ լինելով պատմական Հայաստանի հոգեբանության եւ ավանդույթի կրող, միայն 2022 թվականին արձանագրեցինք, որ Հայաստանի անվտանգության ապահովման առանցքային գործոնն արհամարհված է, եւ մեր պետականության առաջին տարիներից է դա տեղի ունեցել: Այդ գործոնը Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմաններն են, Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքը: Միայն 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմից հետո ես աներկբա եւ միանշանակ համոզվեցի, որ Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքի արձանագրումն է, որ կարող է լրացուցիչ եւ որոշիչ գործոն դառնալ մեր երկրի կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ անվտանգությունն ապահովելու հարցում: Եվ այդ պահից փաստացի քաղաքական եւ հոգեբանական մի գործընթաց մեկնարկեց, որ կարելի է անվանել սահմանազատման գործընթաց իրական Հայաստանի եւ պատմական Հայաստանի միջեւ»,-ասաց Փաշինյանը:

Ըստ նրա՝ իրական եւ պատմական Հայաստանների միջեւ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացն ավելի հեշտ չի ընթանում, քան Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացը:

«Եթե անկեղծ ասեմ՝ իրական Հայաստանի եւ պատմական Հայաստանի միջեւ սահմանազատման գործընթացը շատ ավելի ցավոտ է ընթանում նաեւ այն պատճառով, որ այդ սահմանազատումը տեղի է ունենում մեզնից յուրաքանչյուրի ներսում եւ ի հայտ է բերում անսպասելի շերտեր ու նրբերանգներ: Ըստ այդմ՝ պատմական Հայաստանը չի ճանաչում իրական Հայաստանի տարածքային ամբողջականությունը, որովհետեւ իրական Հայաստանի տարածքային ամբողջականությունը սահմանափակող գործոն է պատմական Հայաստանի համար, եւ նրան դրսեւորվելու հնարավորություն չի տալիս»,-ասաց վարչապետը:

Նրա խոսքով՝ այս առումով կամա թե ակամա պատմական Հայաստանը ձայնակցում է մի շարք երկրների հետ, որոնք նկրտումներ ունեն իրական Հայաստանի ինքնիշխանության, անկախության, տարածքների նկատմամբ, որովհետեւ իրական Հայաստանի տարածքային ամբողջականությունը, միջազգայնորեն ճանաչված սահմանը նույն կերպ սահմանափակող գործոն է այդ երկրների ախորժակի համար: Վարչապետի խոսքով՝ պատմական Հայաստանն առանցքային նշանակություն ունի մի շարք երկրների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների համար: «Պատմական Հայաստանը այդ երկրների խմբի հետ մեր թշնամանքի հարատեւ երաշխիքն է, եւ երաշխիք, որ այդ երկրները Հայաստանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականություն վարելու պատճառաբանություն ու բացատրություն կունենան: Պատմական Հայաստանի տեսլականը միշտ կառաջնորդի դեպի ցեղասպանության թակարդը: Որպես Հայաստանի վարչապետ՝ ես ինձ պարտավոր եմ համարում արձանագրել եւ բարձրաձայնել, որ մենք պետք է կենտրոնանանք իրական Հայաստանի շահերի սպասարկման գործին վրա՝ ընդ որում, արձանագրելով պատմական Հայաստանի գործելակերպին եւ մտածողությանը երբեւէ վերադառնալու կենսական անհնարինությունն ապագայում, հակառակ պարագայում մենք անվտանգային, արտաքին մարտահրավերները հասցեագրելու շանս չենք ունենա նույնիսկ, որովհետեւ կունենանք արտաքին սպառնալիքներ գեներացնող հարատեւ աղբյուր մեր իսկ ներսում, մեր ամենօրյա իրականության մեջ՝ առանց այս փաստը խորությամբ եւ ամբողջությամբ ըմբռնելու ու գնահատելու»,-ասաց նա:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

### ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀՀ ԵՎ ՌԴ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՆ

ՌԴ եւ ՀՀ ղեկավարները հնարավորություն կունենան քննարկել երկկողմ հարաբերություններում ծագած հարցերն ու խնդիրները. ինչպես հայտնում է INTERFAX-ը, այս մասին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: Ճեպազրույցում նրան խնդրել են մեկնաբանել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունն այն մասին, որ Հայաստանը «ոչ մի սխալ քայլ» չի արել Ռուսաստանի հետ հարաբերություններում, եւ «հակառակ դեպքերը բազմաթիվ են»: «Մենք հիմնվում ենք նրա վրա, որ մեր երկկողմ հարաբերություններում վերջերս ի հայտ եկած բոլոր դժվար պահերը կլուծվեն հենց նման երկխոսության շրջանակներում», - պատասխանել է Կրեմլի ներկայացուցիչը: Պեսկովի խոսքով՝ հույս կա, որ «տեսանելի ապագայում նախագահները հնարավորություն կունենան անձամբ քննարկելու նման հարցեր, եթե դրանք լինեն օրակարգում»:

## ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆԸ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՏՇՏՈՆԻՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արա Մկրտչյանն ազատվել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնից: Համապատասխան որոշումը ստորագրվել է երեկ՝ ապրիլի 10-ին:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Արա Մկրտչյանին ազատել արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնից»,- ասված է որոշման մեջ:

Հիշեցնենք, որ Մկրտչյանը արդարադատության փոխնախարար էր նշանակվել 2023 թվականի հունվարի 14-ին:

## ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՅԿՈՏԵԼ Է

Երեկ երեկոյան խորհրդարանում մեկնարկել է կառավարության հետ հարցուպատասխանը: Նիստին մասնակցել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Կառավարությանը հարց ուղղելու համար հերթագրվել է 12 պատգամավոր:

Ընդդիմադիր երկու խմբակցության պատգամավորները չմասնակցեցին նիստին. նրանք այդ ընթացքում գտնվում էին Հակակոռուպցիոն դատարանում՝ Արմեն Աշոտյանի դատական նիստին:

700 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

# ԿԵՂԾ ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված նյութերի հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ ՊԵԿ Բագրատաշենի մաքսակետի մաքսային տեսուչներ Ա. Մ.-ն և Ա. Գ.-ն, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում բեռնատարների վարորդների օժանդակությամբ, դիտավորությամբ չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները և առանց համապատասխան ապրանքների առկայությունն ստուգելու թույլատրել են դատարկ բեռնատարների ելքը, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 700 մլն ՀՀ դրամի գույքային վնաս:**

Մասնավորապես՝ 2023 թ. դեկտեմբերի 25-ին եւ 26-ին մաքսային տեսուչ Ա. Մ.-ի մտերիմ Ռ. Գ.-ն Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծել է 87,6 տոննա շարժիչային յուղեր, սակայն ներքին սպառման նպատակով ներմուծված հիշյալ ապրանքների համար շուրջ 69 մլն ՀՀ դրամի չափով մաքսատուրքեր, հարկեր եւ այլ տուրքեր վճարելու պարտավորությունից ազատվելու համար տնտեսվարողը դրանք ձեւակերպել է «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով: Այնուհետեւ դրանք տեղափոխող բեռնատարները մինչեւ Բագրատաշենի մաքսակետ հասնելը դատարկվել են եւ առանց բեռների մուտք գործել արտահանման ուղղության վրա տեղակայված հսկողության տարածք: Նույն պահին արտահանման տեղամասում ծառայություն իրականացնող մաքսային տեսուչներ Ա. Մ.-ն եւ Ա. Գ.-ն, առանց բեռնատարները կշռելու եւ դրանցում համապատասխան ապրանքների առկայությունն ստուգելու, դիտավորյալ չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները եւ վերոհիշյալ տրանսպորտային միջոցների վարորդների օժանդակությամբ թույլատրել են իրականում չարտահանվող ապրանքների տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից երրորդ երկրներ՝ այդ կերպ Ռ. Գ.-ին ազատելով հարկերը վճարելու պարտականությունից:

Բացի դրանից, նախաքննության ընթացքում բացահատվել է նույն մեխանիզմով հանցանքների կատարման եւս 15 դեպք: Մասնավորապես՝ պարզվել է, որ Ռ. Գ.-ն 2022 թվականի հոկտեմբերի 21-ից մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 22-ը ԻԻՀ-ից ներկրել է ընդհանուր ավելի քան 700 տոննա տարբեր տեսակի ավտոյուղեր: Ապրանքների ներմուծման ժամանակ օրենքով սահմանված մաքսատուրքեր, հարկեր եւ այլ տուրքեր վճարելու պարտավորությունից ազատվելու համար Ռ. Գ.-ի կողմից ներկրված հիշյալ բոլոր ապրանքները դարձյալ ձեւակերպվել են «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով: Դրանցով բեռնված տրանսպորտային միջոցները, սակայն, մինչեւ Բագրատաշենի մաքսակետ հասնելը դատարկվել են եւ առանց բեռների մուտք գործել արտահանման ուղղության վրա տեղակայված հսկողության տարածք, որտեղ էլ ՊԵԿ վերը նշված երկու պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ եւ բեռնատարների վարորդների օժանդակությամբ, առանց համապատասխան մաքսային հսկողական ընթացակարգերի, թույլատրվել է դատարկ բեռնատարների ելքը ԵԱՏՄ տարածքից երրորդ երկրներ, որի հետեւանքով պետական բյուջե չեն վճարվել առանձնապես խոշոր չափի՝ շուրջ 700 մլն դրամի հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ:

Նախաքննության ընթացքում մեղադրանք է ներկայացվել 15 անձի: Իշխանական կամ ծառայողական լիազորություններն ի վնաս պետական շահերի օգտագործելու եւ ծառայողական պարտականությունները չկատարելու համար մաքսային տեսուչներ Ա. Մ.-ին եւ Ա. Գ.-ին մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (16 դրվագ), իսկ վերջիններիս օժանդակած վարորդներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով:

Մաքսային տեսուչների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի՝ շուրջ 700 մլն ՀՀ դրամ վնասի չափով արգելանք է դրվել մեղադրյալներին պատկանող գույքի վրա: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

# ԳՈՒՅՔԻ ՀԱՓԾՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

**ՀՀ ֆինչական կոմիտեի ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ֆինչական բաժնում ֆինություն է իրականացվում՝ պարզելու Արմավիրի մարզում տեղի ունեցած՝ առերեւույթ զինված հարձակմամբ առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության դեպքի հանգամանքները:**

2024 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 07:55-ին, քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ իր ազգականների վրա տեղի է ունեցել զինված հարձակում եւ նրանց թալանել են: Ահազանգից անմիջապես հետո Արմավիրի մարզի Փարաքար համայնք տանող ճանապարհին հայտնաբերվել է «Հունդաի Սոնատա» մակնիշի ավտոմեքենա, իսկ մայթեզրին գտնվել են 3 անձ, որոնց ձեռքերին ամրակցված են եղել ձեռնաշղթաներ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ձեւավորվել է քննչական խումբ:

Նախաքննության շրջանակերում նախնական, դեռեւս քննությամբ ստուգման ենթակա տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ապրիլի 10-ին՝ ժամը 07:10-ի սահմաններում դիմակավորված, ատրճանակներով զինված առնվազն 4 անձ ավտոմեքենայով կանգնեցրել են վերը նշված 3 անձանցից մեկի վարած «Հունդաի Սոնատա» մակնիշի ավտոմեքենան, վարորդին ու 2 ուղեւորներին բռնություն գործադրելով իջեցրել ավտոմեքենայից, պառկեցրել գետնին ու ձեռնաշղթաներ հագցրել:

Այնուհետեւ, արցունքաբեր գազ կիրառելով՝ երեքին էլ նստեցրել են ավտոմեքենան, հափշտակել բեռնախցիկում գտնվող ճամպրուկների եւ պայուսակների մեջ եղած մոտ 1 միլիարդ 24 միլիոն ՀՀ դրամ գումարին համարժեք, շուրջ 36 կիլոգրամ ոսկյա երեք ձուլակտորներ, մոտ 1 միլիարդ 216 միլիոն ՀՀ դրամին համարժեք 293 միլիոն ռուբլի գումարը եւ դիմել փախուստի:

Հիշյալ 3 անձինք ճանաչվել են տուժող: Դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերվել է տեսանկարահանող սարք, որի տեսագրությունների կրիչն առգրավվել է, վերցվել են նաեւ նշված անձանց ամրացված ձեռնաշղթաները:

Նշանակվել է համապատասխան փորձաքննություն:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են քննչական, վարութային, օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքներն ու առերեւույթ հանցագործություն կատարած անձանց ինքնությունները պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու նպատակով:

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

## ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՇՐՋԱՆԱՌՈՒՄ՝ «ԹԵԼԵԳՐԱՄ»-ՈՎ

Քննություն է իրականացվում՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության հերթական դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ. այս մասին հայտնում են ՔԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ նշելով, որ 2024 թվականի ապրիլի 6-ին ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները ապօրինի թմրանյութ պահելու հիմնավոր կասկածով Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայից ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Արարատի մարզի բնակիչ 2 եղբայրների: Նրանցից մեկի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է պոլիէթիլենային տոպրակ՝ լցված ընդհանուր 3.77 գրամ քաշով «Կոկաին» տեսակի թմրամիջոցի նմանվող փոշենման զանգվածով, «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի յուղի նմանվող զանգվածով լցված 3 ապակյա սրվակ, ինչպես նաեւ զիպ փականով 4 պոլիէթիլենային տոպրակ ու էլեկտրական գրամային կշեռք: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

«Նշանակված դատաքիմիական փորձաքննությամբ պարզվել է, որ փորձաքննության ներկայացված 3.77 գրամ քաշով սպիտակ փոշենման զանգվածը «Կոկաին» տեսակի թմրամիջոց է:

Նախնական տվյալներ են ձեռք բերվել նաեւ այն մասին, որ հիշյալ թմրամիջոցը «Թելեգրամ» հավելվածի միջոցով հետագա իրացման նպատակով ձեռք է բերել եղբայրներից մեկը, ում մոտից էլ հայտնաբերվել է թմրամիջոցը: Խուզարկություն է կատարվել նաեւ վերջինիս՝ գյուղում գտնվող տան եւ դրան կից օժանդակ կառույցներում, որի արդյունքում հայտնաբերվել եւ առգրավվել են թմրանյութերի փաթեթավորման համար նախատեսված պարագաներ եւ տարբեր տեսակի թմրամիջոցների նմանվող զանգվածներ: Մասնավորապես՝ պլաստմասե տարայում եւ 9 փաթեթներում լցված՝ ընդհանուր 172.89 եւ 14.1 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի նմանվող դեղնականաչավուն զանգված, փաթեթավորված, ընդհանուր 2,2 գրամ քաշով «MDMA» տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված, «LSD» տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով լցված 1 փաթեթ, «Մարիխուանա»-ի յուղով լցված 5 սրվակ, 1 փաթեթում առանձնացված մուգ շագանակագույն զանգված, որը նախնական տվյալով հանդիսանում է «Կոշտ» տեսակի թմրամիջոց, եւս մեկ 1 փաթեթ՝ լցված ընդհանուր 4.1 գրամ քաշով մուգ գույնի չորացված զանգվածով, «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի սերմերի 19 տուփ, տարբեր տեսակի չորացված սնկանման զանգվածներով 66 փաթեթ, ինչպես նաեւ դեղնականաչավուն հետքերով 2 տարա, աղաց եւ այրված հետքերով ծխամորճ:

Նշված բոլոր զանգվածները ներկայացվել են դատաքիմիական, դատաբուսաբանական համալիր փորձաքննության: Եղբայրներից մեկի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում. նրան մեղադրանք է ներկայացվել: Միջնորդություն է ներկայացվել դատարան վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար, ինչը բավարարվել է: Գործի առնչությամբ ձեռնարկվում են քննչական, վարութային, ինչպես նաեւ օպերատիվ հետախուզական միջոցառումներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 89 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## 64 ԱՐՑԱԽՑԻ ՀԵՌԱՑԵԼ Է ՏԱՎՈՒՇԻՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 18-ին Ոսկեպարի մշակույթի տանը կայացած հանդիպման ժամանակ սահմանագոտու բնակիչներին վախեցրեց պատերազմով՝ ասելով, որ եթե նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները չհանձնեն Ադրբեջանին, Ադրբեջանը եւ Թուրքիան Հայաստանի դեմ պատերազմ են սկսելու: Ոսկեպարի, Ոսկեվանի, Բաղանիսի եւ Կիրանցի բնակիչները չվախեցան Նիկոլ Փաշինյանի խոսքերից, սակայն Ոսկեպար գյուղում հաստատված արցախցի 3 ընտանիքները հեռացան Ոսկեպարից. Ոսկեվանում հաստատված, Արցախից բռնագաղթած 9 ընտանիքներից 4-ը հեռացան Ոսկեվանից: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում էինք ուղղել, թե 2024թ. մարտի 18-ից հետո՝ մինչեւ այժմ, Տավուշի մարզի սահմանամերձ ո՞ր բնակավայրից քանի՞ արցախցի ընտանիք է հեռացել, ներկայումս որքա՞ն է Տավուշի մարզում բնակվող, Արցախից բռնագաղթած ընտանիքների եւ բնակիչների թիվը: Մարզպետարանից պատասխանե են. « 2024 թվականի մարտի 18-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում հաշվառված բռնի տեղանվածների թիվը 754 ընտանիք է՝ 2698 անձ, իսկ 2024 թվականի ապրիլի 8-ի դրությամբ՝746 ընտանիք, 2634 անձ»: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը, Նիկոլ Փաշինյանի նման, Արցախ բառը այլեւս չի օգտագործում:

## ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՒՌՃԱՑՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայության տակ ընդամենը երկու ոլորտ կա՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ պետական առողջապահական հիմնարկները, որոնք մարզպետի աշխատակազմը կառավարում է ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Տավուշի մարզպետի աշխատակազմը խիստ ուռճացած է, այնտեղ կան նաեւ թափուր հաստիքներ, որոնք երկար ժամանակ է, որ չեն լրացվում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը, հարց էր ուղղել, թե, ըստ հաստիքացուցակի, որքա՞ն է մարզպետի աշխատակազմի աշխատակիցների թիվը, նրանցից քանի՞սն են քաղաքացիական ծառայող, մարզպետի աշխատակազմում որքա՞ն է թափուր հաստիքների թիվը, ինչո՞ւ հայտարարություններ չեն տրվում դրանք համալրելու համար: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում, ըստ հաստիքացուցակի, առկա է 76 հաստիք, որից 56-ը՝ քաղաքացիական ծառայող: ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում 2024 թվականի փետրվարին տեղի է ունեցել հաստիքների կրճատման գործընթաց, որի արդյունքում առաջացել են թափուր հաստիքներ: Առկա է հինգ քաղաքացիական ծառայության թափուր հաստիք: Օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնների համալրման հայտարարությունների համար նախատեսված է եռամսյա ժամկետ»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՄԱՐԶԵՐ

# «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՆԱՆ»

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն Ազգային ժողովում Կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ընթացքում անդրադարձել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների՝ գործուղման կարգով ՀՀ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքի անցնելու և հավելավճար ստանալու հարցին:**

Նախարարը տեղեկացրել է՝ մարտի 31-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 330 ուսուցիչ գործուղվել է ՀՀ մարզերի դպրոցներ, սակայն հանրակրթության համակարգում ընդհանուր առմամբ ԼՂ-ից բռնի տեղահանված շուրջ 600 ուսուցիչ է աշխատում:

«Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված եւ ՀՀ մարզային դպրոցներ գործուղված բոլոր ուսուցիչները պետք է ստանան 30% հավելավճար, իսկ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերի որոշ բնակավայրերում աշխատանքի անցած ուսուցիչների համար նաեւ ամսական 50 հազար դրամ լրավճար է նախատեսված»,- ասել է նախարար Ժաննա Անդրեասյանն ու հավելել՝ եթե կան դեպքեր, երբ գումարները չեն տրվել, ուսուցիչները կարող են դիմել նախարարություն:

ԿԳՄՍ նախարարը նաեւ տեղեկացրել է՝ այժմ շրջանառվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, ըստ որի, ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների գործուղման ժամկետները կերկարաձգվեն, որպեսզի այն ուսուցիչները, որոնք դեռեւս չեն դիմել գործուղման ծրագրին, հնարավորություն ունենան դիմելու:

Ազգային ժողովում կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ընթացքում Ժաննա Անդրեասյանին նաեւ հարց է ուղղվել դպրոց ընդունվելիս երեխաների բուժզննման տեղեկանք ներկայացնելու պահանջը պարտադիր դարձնելու անհրաժեշտության մասին:

«Դպրոց ընդունվելու գործընթացը պետք է լինի հնարավորինս պարզ ու մատչելի: Երեխաների պարբերական բուժզննման գործընթացները, կարծում եմ, որեւէ կերպ պետք չէ կապել դպրոց ընդունվելու գործընթացի հետ: Ընդունելության պարագայում մենք փորձել ենք կրճատել անհրաժեշտ թղթաբանության ծավալները՝ գործընթացը հնարավորինս թվայնացնելով: Ընդունելության գործընթացում վարչարարության պարզեցման անհրաժեշտություն, միանշանակ, կար, հաշվի առնելով թե՛ տարատեսակ հերթերը, թե՛ կոռուպցիոն ռիսկերը. բայց սա որեւէ կերպ չի կարող անդրադառնալ երեխայի պարբերական բուժզննման անհրաժեշտությանը»,- ասել է նախարարն ու հավելել, որ բուժզննման տեղեկանքները շարունակում են ներկայացվել դպրոց, բայց ուսումնական տարվա ընթացքում՝ մինչեւ ուստարվա ավարտը:

«Բուժզննման տեղեկանքների ներկայացումը շարունակում է մնալ պարտադիր արդեն դպրոցում սովորելու ընթացքում՝ երեխայի բացակայության դեպքում»,- ընդգծել է Ժաննա Անդրեասյանը:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՏՆՎԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Ապրիլի 10-ին Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի Ներքին Խնձորեսկ հատվածում միջադեպ է տեղի ունեցել: Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող հովիվը մոլորված հոտին փնտրելիս հայտնվել է Ադրբեջանի տարածքում. իրադրության բերումով երկու կողմերի սահմանապահների կողմից հրաձգություն է տեղի ունեցել:

«Միջադեպի հետեւանքով ադրբեջանական կողմն ունի մեկ վիրավոր: Հայաստանի Հանրապետության ԱԱԾ սահմանապահ զորքերը պատրաստ են Ադրբեջանի Հանրապետության սահմանապահ զորքերի հետ համատեղ քննության: Անկախ համատեղ քննությունից՝ ՀՀ սահմանապահ զորքերը իրականացնում են սեփական քննությունը, եւ արդյունքների մասին կհաղորդվի լրացուցիչ: Պարզաբանման ենթակա է նաեւ հարցը, թե ինչու եւ ինչպես են հովիվը եւ հոտը հատել սահմանը:

Հայկական կողմի համար նման միջադեպերը ցանկալի չեն: Նշենք նաեւ, որ ադրբեջանական կողմը վերադարձրել է մոլորված հոտը: Հովիվը նույնպես գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում»,- ասված է ԱԱԾ-ի տարածած հաղորդագրության մեջ:

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով սույն թվականի ապրիլի 12-ից փորձնական տարբերակով երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Գյուրջյան-Սաֆարյան փողոցների խաչմերուկում՝ կից ներկայացվող երթեւեկության կազմակերպման սխեմայի համաձայն:




Մասնավորապես՝ նշված խաչմերուկում երթեւեկությունը կկազմակերպվի շրջանաձեւ:

Նշված ճանապարհահատվածում կտեղադրվեն համապատասխան ճանապարհային նշաններ եւ կիրականացվեն գծանշման աշխատանքներ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 6 մարդ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՃԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ՊՈԱԿ-ՆԵԲՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն ներկայացրել է թարմ տվյալներ կազմակերպությունների թվի, աշխատողների թվաքանակի եւ միջին ամսական անվանական աշխատավարձի ըստ կազմակերպության չափի եւ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների:

Այսպիսով, 2024 թվականի հունվարին գրանցվել է 66 հազար 962 կազմակերպություն, որից պետական են համարվում 3 հազար 651-ը եւ ոչ պետական՝ 63 հազար 311-ը:

Կարող ենք ասել, որ ներկայացված տվյալների վերլուծության արդյունքում նկատում ենք, որ ոչ պետական կազմակերպություններում միջին ամսական աշխատավարձն ավելի բարձր է քան պետական կազմակերպություններում:

Նշենք՝ թվային եւ պատկերավոր տվյալներով:

Այսպիսով, ոչ պետական կազմակերպություններում միջին անվանական աշխատավարձը կազմել է 291 429 դրամ, պետական կազմակերպություններում՝ 208 071 դրամ: Ստացվում է, որ ոչ պետական սեկտորում միջին անվանական աշխատավարձը գրեթե 90 հազար դրամով ավելի է պետական կազմակերպությունների հետ համեմատ:

Հարկ է նաեւ նշել, որ նշված աշխատանքի վարձատրությունը ներառում է նաեւ հարկերը եւ պետական տուրքերը:

## 9 ՄԼՆ ՀԱՃԻՎ ԵՎ 4 ՄԼՆ ՀԱՃԱԽՈՐԴ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում հաճախորդների եւ նրանց հաշիվների քանակը 2023 թվականի դեկտեմբերին կազմել է 4 մլն 659 հազար 418 հաճախորդ, իսկ 2024 թվականի հունվարին՝ 4 մլն 647 հազար 114 հախախորդ:

Նկատենք, որ մեկ ամսվա տարբերությամբ բանկերի հաճախորդների թիվը նվազել է 13 հազարով:

Այդ թվում, 2024 թվականի հունվարին բանկային համակարգում հաճախորդների 196 681-ը իրավաբանական անձինք են, իսկ ֆիզիկական անձանց թիվը կազմել է 4 450 433 անձ:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում առկա հաշիվների թիվը կազմել է 9 488 243:

Բանկերում բնակչությունից ներգրաված ավանդների մնացորդը 2024 թվականի փետրվարի վերջին կազմել է 2 563 807 մլն դրամ եւ նախորդ ամսվա նկատմամբ աճել է 10 379 մլն դրամով կամ 0.4%-ով, իսկ 2023 թվականին համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 379 175 մլն դրամով կամ 17.4%-ով:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Կառավարությունը շուտով կներկայացնի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման ծրագիրը:**

Այս մասին հայտարարեց փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը՝ ներկայացնելով ծրագրի վերաբերյալ մանրամասներ:

Փոխվարչապետի խոսքով՝ ծրագրով նախատեսվում է տուն գնելու կամ կառուցելու նպատակով 3-ից մինչեւ 5 միլիոն դրամ հատկացնել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով:

«Աջակցության շահառու կլինեն մեր այն հայրենակիցները, որոնք Հայաստանում կհաստատեն երկարատեւ բնակություն: Որպես չափորոշիչ կսահմանվի Հայաստանի Հանրապետության քաղաքացի դառնալու հանգամանքը: Աջակցության նվազագույն չափը մեկ մարդու հաշվով 3 միլիոն դրամ կլինի, իսկ եթե շահառու ընտանիքը որոշի բնակարան գնել կամ կառուցել կառավարության կողմից որոշված բնակավայրերում, մեկ մարդու հաշվով աջակցությունը կդառնա 4-5 միլիոն դրամ»,- ասաց Խաչատրյանը:

Նա նշեց, որ ցանկում ընդգրկվելու են մարզային այն բնակավայրերը, որտեղ կառավարությունն իրականացնում է սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումներ, որակյալ կրթական, առողջապահական եւ այլ անհրաժեշտ ծառայություններ ապահովելու նպատակով:

«Այսպիսի բնակավայրերում շահառուները կարող են ֆինանսական աջակցության մի մասն օգտագործել նաեւ տնամերձ հողամասի գնման, տունը նորոգելու եւ կահավորելու, ինչպես նաեւ գյուղատնտեսական նշանակության հողամաս գնելու համար: Այն ընտանիքները, որոնք նշված բնակարաններում կբնակվեն 10 տարի, կստանան դրանց նկատմամբ սեփականության իրավունք»,- ասաց փոխվարչապետը:

Խաչատրյանի խոսքով՝ սոցիալական բնակարաններ կտրամադրվեն այն անձանց, ովքեր օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունենա օգտվելու բնակարաններ գնելու կամ կառուցելու ծրագրային աջակցությունից. ծրագիրը կիրականացվի փուլերով:

«Շահառու ընտանիքներին աջակցությունը հասանելի կդառնա որոշակի հաջորդականությամբ:

Առաջին տարվա համար աջակցություն կստանան այն ընտանիքները, որոնց կազմում երեք եւ ավելի անչափահաս երեխաներ կան: Առաջնահերթություն կունենան նաեւ այն ընտանիքները, որտեղ կա մեկ անչափահաս երեխա եւ միաժամանակ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձ: Երկրորդ փուլում աջակցությունը հասանելի կդառնա երկու անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար եւ այդպես շարունակ: Հաշվի առնելով, որ բնակարանային կարիքների հասցեագրման երկարաժամկետ ծրագիրը պետք է իրականացվի փուլերով եւ մեր հայրենակիցների մի մասը ծրագրի աջակցությունից կօգտվեն երկրորդ, երրորդ կամ չորրորդ տարում՝ կշարունակենք վարձակալության ծախսերի աջակցություն ցուցաբերել նաեւ 2025 թվականից հետո, սակայն աջակցության չափորոշիչները կվերանայվեն՝ բարձրացնելով ծրագրի սոցիալական թիրախավորումը»,- եզրափակեց Խաչատրյանը:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԸ ԿԳՈՐԾԻ

2024 թվականի ապրիլի 5-ին ՀՔԱՎ գրասենյակ է դիմել իրավապաշտպան Անտոն Շչերբակը: Վերջինս երկար տարիներ Ռուսաստանում զբաղվել է մարդու իրավունքների, մասնավորապես՝ զինվորականների եւ զորակոչիկների իրավունքների պաշտպանությամբ, համագործակցել «Զորակոչիկների դպրոց» կազմակերպության հետ (պաշտոնական կայքէջը՝ https://netprizyvu.ru/): Ա. Շչերբակը հայտնել է, որ օրերս Ռուսաստանում, ապա Հայաստանում, արգելափակվել է «Զորակոչիկների դպրոց»-ի կայքէջը: Հայաստանում կայքէջի արգելափակմամբ ՀՀ-ն խախտել է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ՝ արտահայտվելու ազատության իրավունքը, ըստ որի. «յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատություն»-ը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, պահանջել՝ տեղեկություն տրամադրել կայքէջի արգելափակման պատճառների եւ իրավական հիմքերի վերաբերյալ: Միաժամանակ, կազմակերպությունը պահանջել է վերացնել կայքի արգելափակումը ՀՀ-ում եւ ապահովել դրա անխափան գործունեությունը

## ԹՎԱՔԱՆԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է

Մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը, ըստ տարիքային խմբերի, ըստ ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի 2002 թվականից մինչեւ այսօր զգալի փոփոխությունների է ենթարկվել:

Բանն այն է, որ 2002 թվականին մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը եղել է 111 տղա եւ 37 աղջիկ, իսկ մինչեւ 2005 թվականը այս թվաքանակը կտրուկ նվազել էր՝ դառնալով 46 տղա եւ 8 աղջիկ:

2023 թվականին այդ տվյալները նվազել են՝ դառնալով 5 տղա եւ 2 աղջիկ՝ անչափահաս:

2023 թվականի տարեվերջին մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասների մեծ մասը 14-15 տարեկան երեխաներ են եւ հիմնականում՝ մայրաքաղաք Երեւանում: Մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասներ կան նաեւ Շիրակի եւ Տավուշի մարզերում:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արեւիկ Ալբերտի Մարտիրոսյանս, ապրում եմ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում: 2008 թվականին ընդունվել եւ 2012 թվականին ավարտել եմ «Հրազդանի հումանիտար ինստիտուտ»-ը, սակայն հետագայում կորցրել եմ ավարտական դիպլոմս:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ԳՈՅ»

# ԱԿՑԻԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

**ArmLur.am-ը դեռ օրեր առաջ հայտնել էր, որ «Գոյ» թատրոնը ժամանակավորապես դադարեցրել է իր նստացույցը. բանն այն է, որ թատրոնը ԿԳՄՄՆ-ի հետ բանակցությունների է գնում:**



Հիշեցնենք, որ «Գոյ» թատրոնի դուռը փակվել էր Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կողմից, ինչի պատճառով էլ «Գոյ» թատրոնի ամբողջ ստեղծագործական անձնակազմը կազմակերպել էր ակցիաներ եւ ժամանակավոր նստացույց՝ պահանջելով վերականգնել իրենց ստեղծագործելու իրավունքը:

ArmLur.am-ը զրուցել է «Գոյ» թատրոնի ռեժիսոր Սարգիս Արզումանյանի հետ:

**-Պարոն Արզումանյան, Դուք հայտնել էիք, որ ժամանակավորապես դադարեցնում եք նստացույցը, քանի որ ԿԳՄՄՆ-ի հետ բանակցությունների եք գնալու: Նախարարությունից Ձեզ ի՞նչ ասացին, ի՞նչ են պատրաստվում անել թատրոնի համար:**

-ԿԳՄՄՆ-ի հետ դեռ բանակցություններ են ընթանում, որպես այդպիսին, վերջնական պատասխան դեռ չկա: Հիմա պայմանավորվածությունն այսպես է. «Գոյ» թատրոնը ծրագիրը կազմել է, ներկայացրել իրենց: Մենք ավելի առարկայական պետք է ամեն բան ներկայացնենք, որ իրենք էլ քննարկեն ու հաստատեն: Ներկա դրությամբ մենք խոսում ենք 1 տարվա պետական աջակցության մասին՝ մեր առաջարկած անցումային փուլի համար: Հիմա փաստաթղթով, օրենքով, կարգով այս խնդիրն ենք փորձում լուծել ԿԳՄՄՆ-ի հետ, եւ գործի միջնորդը թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանն է. իր ջանքերով է մեծ մասամբ այս ամենը կատարվում:

**-Դուք նշել էիք, որ «Գոյ» թատրոն մուտք եք գործելու հենց ձեր մուտքից, որը կողպված է, հաջողվե՞ց մուտք գործել, թե՞ ոչ:**

-Մուտք գործելը, այսպես ասած, իրավական առումով էինք նշում, քանի որ դատարանը վարույթ է վերցրել այն գործը, որը պետական ռեգիստրում ոչ իրավաչափ պետք է ճանաչվի: Այժմ վիճարկման հայցով, ըստ վարչական դատավարության 83-րդ հոդվածի, արդեն տրամաբանորեն կասեցվում են նաեւ բխող գործողությունները: Այսինքն՝ կասեցվում են գործողությունները, դուռն էլ բնականաբար պետք է բացվի, եւ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի իրազեկումն աշխատողներին, որ իբրեւ թե, իրենց կողմից նշված օրը աշխատանքի չգալու դեպքում աշխատակիցները կզրկվեն գործից պետք է չեղարկվի, որովհետեւ գործողություններն այլեւս կասեցված են օրենքի ուժով: Օրերս մեր փաստաբանը մի դիմում էր գրել, որը փորձեցինք տանել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, իրենց երկօրյա ժամկետ տալ, որպեսզի «Գոյ» թատրոնի դուռը բացեն, սա, ընդ որում օրենքի ուժով է, ոչ թե ստիպողաբար. մենք ոչ թե ապօրինաբար էինք փորձում ներս մտնել, այլ իրավական ձեւով: Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի փոխտնօրենը դիմումը չվերցրեց, ասաց՝ տարեք «պոչտայով» ուղարկեք: Իրենց փաստաբանը եւս դիմումը չվերցրեց. չգիտեմ, թե ինչի համար է այս խտրականությունը, կամ սկզբունքայնության ինչ հարց կա, որ չվերցրին փաստաթուղթը, բայց բովանդակությանը նրանք ծանոթացան: Այսինքն՝ ամեն դեպքում իրենք իրազեկված են ամենի մասին, ինչը, որ գրված է այդ թղթի վրա: Այնուամենայնիվ, մենք չզլացանք եւ փոստով եւս ուղարկեցինք նույն դիմումը: Այժմ իրենց տվել ենք 2 օր ժամանակ, որպեսզի դուռը բացեն. դա մեր քմահաճույք-ցանկությունը չէ, այլ օրենքի կետ:

**-Սունդուկյանի անվան թատրոնից միայն մ՛յդ արձագանքն եք ստացել, ուրիշ ոչինչ չե՞ն ասել:**

-Ոչ, ուրիշ արձագանք չկա, միայն սա է:

**-Նաեւ նշել էիք, որ ժամանակավորապես դադարեցնում եք նստացույցը, եթե այս ամենը չհաջողվի, նորից սկսելո՞ւ եք ակցիան:**

-Բնականաբար, այդ պայմանավորվածությամբ ենք մենք արել ամեն բան: Նախարարության կողմից եղել է պահանջ, որ եթե բանակցում ենք, ապա բնականաբար ակցիաներ եւ այլ գործողություններ պետք չեն: Մեր նպատակն էլ, բնականաբար, ակցիաները չեն, այլ հարցին վերջնական լուծում տալը:

Կրկին ուզում եմ շեշտել թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանի միջնորդությունը այս գործին, քանի որ եթե թատերական գործիչների միությունը խառնվել է այս ամենին, մենք պարտավոր ենք հավատալ նախ միության նախագահին ու թատերական գործիչների միությանը՝ ԿԳՄՄՆ-ից առաջ, որովհետեւ միշտ բազմիցս հարց է հնչել՝ ուր է թատերական գործիչները միությունը, ինչու որեւէ գործողություն չի անում. փաստացի հիմա այս կառույցը գործողություն է կատարում, ու չհավատալ դրան, կարծում ենք, անազնիվ կլինի. եթե հանկարծ որեւէ պահի հասկանանք, որ սա ծուղակ է, բնականաբար ամեն բան կփոխվի եւ կսկսվի այլ թափով:

*Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐՔԻ ՇԱԲԱԹ

**Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում հանդիսավոր միջոցառմամբ ամփոփվել է «Մանկապատանեկան գրքի եւ երաժշտության շաբաթ» ծրագիրը:**

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, գրողներ, մանկագիրներ՝ Անուշ Վարդանյանը, Սաթենիկ Ղազարյանը, Օլգա Դարյանը, Ալվարդ Հովսեփյանը եւ Տիգրան Նիկողոսյանը:

Ինչպես հայտնում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը իր հաղորդագրության մեջ, ամեն տարի անցկացվող այս միջոցառման նպատակն է մեծացնել մանուկների ու պատանիների հետաքրքրությունը գրքի ու գրականության նկատմամբ, ծանոթացնել ժամանակակից հայ գրողներին եւ նրանց ստեղծագործություններին: Միջոցառումը մեկնարկել է տարբեր տարիներին գրադարանում կազմակերպած «Մանկապատանեկան գրքի եւ երաժշտության շաբաթ» ծրագրի մասին պատմող տեսանյութի ցուցադրությամբ: Այնուհետեւ, Երեւանի թիվ 141 եւ 79 դպրոցների, Եղեգնուտ ու Նորաբաց գյուղերի դպրոցների սաները մանկագիրներին ողջունել են եւ ընթերցել հատվածներ նրանց ստեղծագործություններից: Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը հանդիպման ընթացքում երեխաների հետ խոսել է ժամանակակից հայ գրականության, ընթերցանության նշանակության եւ այդ ճանապարհին գրական բացահայտումներ անելու կարեւորության մասին:

Միջոցառմանը ներկա մյուս գրողները եւս երեխաներին իրենց ուղերձներն են հղել՝ լավ սովորել, գրքեր ընթերցել, այդ ճանապարհին բացահայտումներ անել եւ գտնել տարբեր հարցերի պատասխաններն ու բանալիները գրքերի միջոցով: Նրանք բոլորը միակարծիք են՝ գիրքը մարդու լավագույն բարեկամն է: Գրական շաբաթի բացումը տեղի է ունեցել Ծաղկաձոր քաղաքում: Այնուհետեւ, Հայաստանի գրողների միության աջակցությամբ գրքերի քննարկումներ, հեքիաթապատումներ ու երաժշտական ցերեկույթներ են կազմակերպվել Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում եւ հանրապետության ողջ տարածքում:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՈՉ-ՈՔԻ Է ԱՎԱՐՏՎԵԼ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացել են քառորդ եզրափակիչի առաջին հանդիպումները:

«Ռեալ»-ը, Մադրիդում ընդունելով «Մանչեսթեր Սիթի»-ին, հանդիպումն ավարտել է ոչ-ոքի՝ 3:3: Գոլառատ խաղում «արքայական ակումբ»-ի կազմում աչքի են ընկել Դիաշը, Ռոդրիգոն եւ Վալվերդեն: «Քաղաքայիններից» էլ գոլերը խփել են Բերնարդու Սիլվան, Ֆոդենը եւ Գվարդիոլը:

Օրվա մյուս խաղում՝ «Արսենալ»-«Բավարիա», եւս գրանցվել է ոչ-ոքի՝ 2:2:

«Զինագործներից» գոլերն իրեն ակտիվում գրանցել են Սական եւ Տրոսարդը, իսկ «Բավարիա»-ից՝ Գնաբրին ու Կանեն:

## ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Ֆուտզալի Գեղարքունիքի մարզային առաջնության փնջային վերջին երկու խաղի արդյունքներն ի հայտ են բերել կիսաեզրափակչի 4 մասնակցի:

Ինչպես տեղեկացնում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Բ ենթախմբի առաջին խաղում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության թիմը հաղթել է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի թիմին, իսկ երկրորդ խաղում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բանակային երկրորդ կորպուսի թիմը՝ Գավառի համայնքապետարանի թիմին:

Այս հանդիպումների արդյունքում ենթախմբում 1-ին տեղը գրավել է Հայաստանի Հանրապետության ՆԳ նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության թիմը, իսկ 2-րդ տեղում է Հայաստանի Հանրապետության ԶՈՒ բանակային երկրորդ կորպուսի թիմը, որոնք էլ անցել են առաջնության կիսաեզրափակիչ փուլ:

Կիսաեզրափակիչ փուլի առաջին հանդիպումը կանցկացվի Ա ենթախմբում 1-ին տեղը զբաղեցրած Մարտունու համայնքապետարանի եւ Բ ենթախմբի 2-րդ տեղը գրաված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բանակային երկրորդ կորպուսի թիմերի միջեւ:

Հաջորդ հանդիպումը կանցկացվի Բ ենթախմբում 1-ին տեղը զբաղեցրած՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Ա ենթախմբի 2-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության թիմերի միջեւ:

Այս հանդիպումների հաղթող թիմերը կպայքարեն առաջնության հաղթողի կոչումը նվաճելու համար:

*● Ապրիլի 16-ին՝ ժամը 19:30-ին, «Հրանտ Մաթեւոսյան» մշակութային կենտրոն-թանգարանում տեղի կունենա Հ. Մաթեւոսյանի «Գոմեշը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 6000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետներում եւ ի՞նչ դարբերականությամբ է ներկայացվում գիտական աստիճանի համար հասկացվող ֆինանսավորման հայտը:**

*Լենա Գյուլբենկյան (46 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 20-ը կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգ մուտք են անում յուրաքանչյուր ամսվա համար ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալները եւ դրանց հիման վրա ձեւավորված եռամսյակային հաշվետվությունը յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը ներկայացնում են կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը կոմիտե են ներկայացնում հաշվետվություն՝ թղթային տարբերակով: Տարվա վերջին եռամսյակի առցանց հաշվետվությունը ներկայացվում է մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 7-ը, իսկ թղթայինը՝ մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը:

*Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հաշվետու եռամսյակի հաշվետվությունը չներկայացնելու դեպքում հաշվի է առնվում նախորդ ներկայացված տեղեկատվությունը՝ անկախ չներկայացման պատճառներից:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ բնակելի տարածքների սեփականաշնորհման համար:**

*Գասպար Պետրոսյան (42 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են տվյալ հանրակացարանը տնօրինող վերադաս կառավարման մարմին, 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում:

*Պետական գույքի կառավարման կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դիմումին կից ներկայացվում են իրավասու մարմինների կողմից տրված՝ անձի՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը եւ զբաղեցրած հանրակացարանային բնակելի տարածքում անձի՝ 3 տարվանից ավելի բնակվելու փաստը հաստատող տեղեկանքներ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Տեղ գյուղում կանանց տոներին նվիրված համայնքային միջոցառման ելույթից առաջ փոքրիկները զրուցում են կուլիսներում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 4 + 7<br>+ 8 + 13 |
| Կոտայքի լեռներ | + 2 + 6<br>+ 8 + 10 |
| Կոտայքի նախալեռներ | + 8 + 10<br>+12 + 16 |
| Գեղարքունիք | + 2 + 5<br>+ 6 + 10 |
| Լոռի | + 4 + 7<br>+ 9 + 11 |
| Տավուշ | + 7 + 10<br>+12 + 15 |
| Արագածոտնի լեռներ | + 8 + 11<br>+ 7 + 10 |
| Արագածոտնի նախալեռներ | + 3 + 6<br>+12 + 16 |

| | |
|---|---|
| Արարատ | +11 + 13<br>+16 + 19 |
| Արմավիր | + 2 + 4<br>+ 6 + 8 |
| Վայոց ձորի լեռներ | + 1 + 4<br>+ 6 + 8 |
| Վայոց ձորի նախալեռներ | +10 + 13<br>+15 + 19 |
| Սյունիքի հովիտներ | + 8 + 10<br>+13 + 15 |
| Սյունիքի նախալեռներ | + 4 + 6<br>+ 7 + 9 |
| ԼՂՀ | + 2 + 5<br>+ 7 + 9 |
| Երեւան | + 12+ 14<br>+ 17 + 19 |

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.4.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*